Ծրագրի անվանումը	Վարդենիս համայնքի Ծովակ, Լուսակունք, Վանեվան և Տորֆավան բնակավայրերի համար խմելու ջրի կապտաժի վերանորոգում
Մարզ	Գեղարքունիք
Համայնքը /համայնքները	Վարդենիս
Համայնքի /բնակավայրի հեռավորությունը մայրաքաղաք Երևանից, ինչպես նաև մարզկենտրոնից	175կմ, 75կմ
Համայնքի /բնակավայրի բնակչությունը	Վարդենիս՝ 39162 Ծովակ, Լուսակունք, Վանեվան, Տորֆավան բնակավայրերի՝ 5067 բնակիչներ, ինչպես նաև Արցախից տեղահանված և այդ բնակավայրերում բնակություն հաստատած 71 բնակիչ:
Սահմանամերձ համայնք/բնակավայր	Նշված բնակավայրերը սահմանամերձ չեն
Բարձր լեռնային համայնք /բնակավայրի	Բարձր լեռնային
Ծրագրի ընդհանուր նկարագրությունը, դրա իրականացման անհրաժեշտությունը, ակնկալվող արդյունքները, գործողությունները և շահառուներ	Վարդենիս համայնքի Ծովակ, Լուսակունք, Վանեվան և Տորֆավան բնակավայրերը բարձր լեռնային են,Ծովակ բնակավայում «Գեոպրոմայնինգ գոլդ» ՍՊԸ-ի կողմից շահագործվում է պեմզայի հանքավայր: Բնակավայրերը ունեն դպրոցներ, գործում են վարչական շենքեր: Չորս բնակավայրի բնակիչները հիմնականում զբաղվում եմ անասնապահությամբ և հողագործությամբ: Բնակավայրերում առկա են մի շարք հիմնախնդիրներ, որոնց լուծման համար իրականացվում են բոլոր անհրաժեշտ գործողությունները: Այդ հիմնախնդիրներից շատերը լուծում են սուբվեցիոն ծրագրերի միջոցով, սակայն առկա են մի շարք առաջնային անհարժեշտ կարիքներ, որոնք չենք կարող իրականացվել սուբվեցիոն ծրագրերի միջոցով: Վարդենիս համայնքի Ծովակ, Լուսակունք, Վանեվան և Տորֆավան բնակավայրերը ունեն խմելու և ոռոգման ջրի կենսական նշանակության խնդիր: Այս բնակավայրերը սպասարկող խմելու ջրագծի կապտաժը և դրանից դուրս եկող ջրագծերը կառուցվել են 1956 թվականին, երբևէ չեն վերակառուցվել: Կապտաժը կառուցվել է ջրի ակունքի վրա, տարիների շահագործման արդունքում պատերը քանդվել են, ինչը առաջացնում է ջրի կորուստ: Ջրի կորուստը հնարավորինս նվազեցնելու համար տարբեր ոչ շինարարական միջոցներով

փորձել ենք փակել քանդված պատերը, սակայն դրանք ինչպես արդյունավետ չեն, այնպես էլ ոչ սանիտարահիգիենիկ են: Կապտաժից դուրս եկող ջրի խողովակները երկաթյա են, շուրջ 68 տարիների շահագործման արդյունքում ամբողջովին էրոզացվել, վնասվել են, արտաքին միջավայրից քարերի ներհոսքի պատճառով խողովակները տեղ-տեղ նաև փակվել են և խոչընդոտում են ջրի հոսքին:

Նշված կապտաժի վերակառուցման և խողովակների փոխարինման արդյունքում խմելու ջուր կստանան Ծովակ, Վանեվան և Լուսակունք բնակավայրերի շուրջ 5067բնակիչներ, ընդհանուր 1283 տնային տնտեսություն և Արցախից բռնի տեղահանված ու այդ բնակավայրերում բնակություն հաստատած 71 անձ:

85քմ մակերեսով և 1000 խմ ծավալով կապտաժի վերակառուցումը Ծովակ, Լուսկունք և Վանեվան բնակավայրերին ոչ միայն կապահովի խմելու ջրով, այլ ոռոգման ջրով: Քանի որ կապտաժի ծավալը մեծ է և ջրի խնայողության համար երեկոյան ժամը 23:00-ից հետո կապտաժի բաժանարարից ջրի հոսքը անջատվում է, գիշերային ժամերին ջրի կուտակման և խնայողության համար, առավոտյան արդեն հավաքված ջրով հնարավոր է ապահովել ինչպես խմելու ջրի անհրաժեշտ քանակը, այնպես էլ ջրի հոսք ապահովել ոռոգման համակարգով:

Կապտաժի վերակառուցման արդյունքում կստացվի, որ Ծովակ, Լուսակունք, Վանեվան և Տորֆավան բնակավայրերի 1283 տնային տնտեսություններ կապահովվեն խմելու և 730 տնային տնտեսություններ կապահովվեն ոռոգման ջրով:

Խնդրին լուծում տալու համար առաջարկվում է վերանորոգել Ծովակ բնակավայրի խմելու ջրի կապտաժը:

Հաշվի առնելով Վարդենիս համայնքի բնակլիմայական պայմանները կապտաժի շինարարական աշխատանքները հնարավոր է իրականացել երկու սեզոնների ընթացքում: Շինարարական աշխատանքի ընդհանուր արժեքը կազմել է 65.598.168 ՀՀ դրամ, սակայն 2024թ հնարավոր է իրականացնելու միայն 28.208.168 ՀՀ դրամի շինարարական աշխատանքներ: Շինարարական աշխատանքների մնացած մասը նախատեսվում է իրականացել 2025թ. տրամադրվող մասհանումների ծախսման ծրագրերից հասանելիք բյուջեից:

	Այս ծրագրի իրականացումը առաջնային և կենսական անհարաժեշտություն է Վարդենիս համայնքի Ծովակ, Լուսակունք, Վանեվան, տորֆավան բնակավայրերի բնակչության լիրաժեք որակյալ խմելու ջրի մատակարարման և կյանքի որակը բարձրացնելու համար: Խմելու ջրի կապտաժի վերանորոգման աշխատանքների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները կազմում են 30.645.084 ՀՀԴ: Ծրագիրը ներկայացված է համայնքի 2022-2026թթ հնգամյա զարգացման ծրագրում, որի հաստատման ընթացքում անցել է հանրային քննարկում: Ծրագիրը համապատասխանում է ՀՀ Կառավարության 2022 թվականի սեպտեմբերի 1-ի N 1370-Ն որոշմամբ սահմանված համայնքային մասհանումների ծախսման ծրագրով նախատեսված 7) ջրամատակարարում և ջրահեռացում միջոցառումներին (ուղղություններին):
Ծրագրի կատարման ժամկետները	**10.05.2024-31.12.2024** Ծրագրի ավարտից հետո, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022թ օգոստոսի 4-ի N 1198-Ն որոշման Հավելված N 1-ի 2-րդ կետով սահմված ժամկետներում կներկայացվի ծրագրի տարեկան հաշվետվությունը:
Ծրագրի հնարավոր ռիսկերը	Վարդենիս համայնքը ունի նմանատիպ ծրագրեր իրականացնելու փորձ, քանի որ վերջին տարիներին միջազգային և տեղական մի շարք կազմակերպությունների հետ իրականացվել են նմանատիպ ծրագրեր: Վերոնշյալ ծրագրի ռիսկ կարող են լինել ֆորսմաժորային իրավիճակները, երբ անհաղթահարելի ուժի ազդեցությամբ հնարավոր չի լինի իրականացնել ծրագիրը:

ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության Վարդենիս համայնքի մասհանումների ծախսման 2024 թվականի ծրագրի ֆինանսական գնահատականները

Հ/Հ	Միջոցառման անվանում	Ծրագրի արժեքը, ընդամենը/հազ. դրամ/	Պետական բյուջե /հազ.դրամ/
1	*Ծովակ, Լուսակունք, Վանեվան, Տորֆական բնակավայրերի համար Ծովակ բնակավայրում խմելու ջրի կապտաժի վերանորոգում*	*30.645.084 ՀՀ դրամ*	*30.645.084 ՀՀ դրամ*
1.1	Շինարարական աշխատանք	*28.208.168 ՀՀ դրամ* (մասնակի)	*28.208.168 ՀՀ դրամ* (մասնակի)
1.2	Նախագծանախահաշվային փաստաթղթերի և փորձաքննության ձեռքբերում	*1.330.000 ՀՀ դրամ*	*1.330.000 ՀՀ դրամ*
1.3	Տեխնիկական հսկողություն	*711.000 ՀՀ դրամ*	*711.000 ՀՀ դրամ*
1.4	Հեղինակային հսկողություն	*395.000 ՀՀ դրամ*	*395.000 ՀՀ դրամ*

ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ